ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԵՎ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ

ՀԱՅՆՇԱՆԱՎՈՐԲԱՆԱՍՏԵՂԾ, ՔՆԱՐԵՐԳՈՒՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ – ԿՈԹՈՂԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Հուշարձանը պետք է մարմնավորի հայ նշանավորբանաստեղծիկերպարը, արտահայտի նրա հայրենասիրական և ազգային–գաղափարախոսական արժեքները:
- Հուշարձանընտեղադրվելու է Օղակաձև զբոսայգու 5–րդ հատվածում գտնվող շատրվաններին հարակից տարածքում: Առանձնացված հողատարածքի սահմանները նշված են Օղակաձև զբոսայգու հատակագծում:
- Հուշարձանի տեղադրման համար հատկացվող հողատարածքը չպետք է գերազանցի 16 քմ:
- Հուշարձանիգաղափարական հորինվածքը, չափերը և նյութի ընտրությունը թողնվում են հեղինակի հայեցողությանը:
- Հուշարձանի դիրքն ու չափսերը պետք է նպաստեն տարածության մեջ մասշտաբի առումով դրա ճիշտ ընկալմանը:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ.

- Տարածքի գլխավոր հատակագիծը-- Մ 1:500
- Ճարտարապետական փռվածքները, հուշարձանի մասշտաբը, ձևը և նյութը արտահայտող գծագրերը -- Մ 1:50
- Հուշարձանի մանրակերտը -- Մ 1:10
- Ֆիգուրատիվ կոմպոզիցիայի պարագայում՝ դիմաքանդակը
- Բացատրագիրը -- 2 օրինակից:

Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Հանձնաժողովի կողմից լավագույնը ճանաչված գործն իրականացվում է։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

- Մրցութային առաջարկությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2016թ. հոկտեմբերի20 –ը հետևյալ հասցեով. Երևանի քաղաքապետարան՝ Արգիշտի փողոց N 1, 1–ին հարկ։
- Գծագրերի աջ կողմի վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը, շրիֆտի բարձրությունը՝ 10 մմ։
- Գործը ներկայացնելիս, փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակը կամ հեղինակային կազմը և մասնակցության տոկոսը։
- Ներկայացված աշխատանքներից և ոչ մեկը իրականացմանը արժան չհամարելու դեպքում, հանձնաժողովը իրավասու է հայտարարել մրցույթի 2–րդ փուլ։
- Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը: